

անհաճոյ կ'ընէ այդ շրջանը, մա'նաւանդ ձիերուն քիթին, որոնք կը դժկամին արդէն անհաստատ կածանէն: Ոստիկանները միշտ ձիու վրայ կը խուզարկեն սա լեռները: Յոգնեցուցիչ ու դաժան այս պայմաններուն մէջ հետապնդումը կը դանդաղի, յանգելու համար սուտին, որ հալածող ջոկատներուն պատրաստ ապրանքն է միշտ: Յեղափոխական որսալը նոյնը չէ քաղաքներու անգործ ոստիկանին եւ սա դաշտերու մշտազբաղ ժանտարմաներուն համար: Առաջինը կը շահագործէ պատահութիւնը, աշխատանք մը ճարողի խանդովը: Երկրորդները վախէն զատ ձանձրոյթ ալ ունին, հետեւելու համար շանոտք ունեցող քոմիթաներուն ասպատակներուն ու կը բաւականանան աղուոր շուքի մը՝ քուն մը քաշելով, ուր տասնապետը կը խմբագրէ լեռներու եւ դիրքերու անուններով համեմատուած տեղեկագիրը, - կատարուած թուղթի վրայ, - արշաւներով հարուստ: Անցեալին, ասպատակներու խումբեր ապրած են սա խորշին մէջ, անհանգիստ չըլլալով հետապնդող ձիաւորներէն, որոնք չեն յօժարիր իջնել ձիերէն: Դէպի ծմակը ճամբան անմատոյց է չորքոտանիներուն: Ու տեսակ մը մագլցում է հարկաւոր: Ընտանի անասուններէն միայն այծերու հօտը կը յանդերգնի այդ տեղուանքը ճարակի իջնել:

Աշնանամուտին, քանի մը շաբթուան համար այս բարբարոս փոսը կը դառնար բնակելի: Հովիւները, ձիւներէն առաջ, աշնան առջի անձրեւին ընձիւղները թանկ կը նկատեն այծերու սաղմին: Տեղին բացառիկ առատութեամբ ջուրը մինչեւ քանի մը մղոն երկայնքի վրայ, մարմար ագուգաներուն - այնքան լաւ փորուած են ժայռերը, որ ուրաք կը թուի մարդու ձեռքով մէջտեղ եկած - եզերքովը կը բուսցնէ բացառիկ առատութեամբ, բայց շատ յարգի խոտ մը: Աւելի կարեւորը, այծարած Ակոն բացառիկ կերպաս է: Դնդեր ու ոսկոր, բնաւ չուք չտեսած տունկի տեսակէն: Պատուական՝ սիրտէն, որ մեր գեղերուն բացատրութեամբը «օսկի է»: Ինչո՞ւ չբացուին այս վէպին էջերը, պէտք եղած լայնքով, անոր պէսներուն, ո-